

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԾՆՆԴՈՑ
ԳՐՔՈՒՄ

Խաչատրյան Ա. (ԵՊՀ, Հայաստան)

a.khachatryan@rambler.ru

Բանալի բառեր՝ Ծննդոց գիրք, արական և իգական անձնանուններ, կենսունակություն, հայկականացում:

Աշխարհի շատ ժողովուրդների համար Աստվածաշունչը եղել և մնում է մշակութային կյանքի հարակա աղբյուր:

ա/ Հայ իրականության մեջ Ծննդոց գրքի անձնանունները մշտապես գործածվել են: Եբրայերենից հայերեն մուտք է գործել անձնանունների մի մեծ խումբ, որոնք առ այսօր գործածական են և մերվել ու ազգայնացվել են հայերի կողմից:

բ/ Ծննդոց գրքի անձնանունների գերակշիռ մասը արական անուններ են, որոնք կազմությամբ պարզ և բաղադրյալ են: Ուշագրավ են հատկապես տեղանուններից և անձնանուններից -ացի ածանցով կազմված երկբաղադրիչ և միահիմք անձնանուններն ու ցեղանունները, որոնք Ծննդոց Գրքում խիստ հաճախադեպ են:

գ/ Ի տարբերություն արականների՝ սակավադեպ կիրառություն ունեն իգական անունները: Սրանք կազմությամբ հիմնականում միահիմք են՝ Եւա, Թամար, Լիա, Ռեբեկա, Սառա, Նոյեմ, Ռաքել....

դ/ Կան անուններ, որոնք գրության և հոլովական զուգաձևություններ ունեն՝ Աբրամ - Աբրահամ, Սառա - Սարա, Ենոք - Ենովք, Աբեմեկք - Աբիմեկք. Լաբանայ - Լաբանու, Յովսեփայ - Յովսեփու, Ռաքելայ - Ռաքելի և այլն:

ե/ Քաղաքական և մշակութային կյանքում հայերի ըմբռնումներն առավել ցայտուն են դառնում իրենց կրած աստվածաշնչյան անունների միջոցով: Ծննդոց գրքում գործածված անուններից

սերնդեսերունդ փոխանցվել և կենսունակ են դարձել Ասքանազ, Եւա,
Իսահակ (Իսահակյան), Թամար, Լիա, Ռեբեկա, Յակոբ, Յովսէփ և այլ
անուններ:

OPERATION ANTHROPONYMS IN GENESIS

Khachatryan A. (Yerevan State University, Armenia)